ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ---------- 2014թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N.286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշումը `

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ քաղաքացի Լաուրա Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Մյասնիկյան պողոտայի հ.5/7 հասցեում և տարածագնահատման 4-րդ գոտում գտնվող 2000.0քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 25.01.2011թ. հ.279779 վկայական) Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Ծ.Իսակովի պողոտային հարող տարածքում և տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող 2000.0քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելուն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քննարկվող նախագծով նախատեսվում է սեփականության իրավունքով (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 25.01.2011թ. հ.279779 վկայական) քաղաքացի Լաուրա Պետրոսյանին պատկանող՝ Մյասնիկյան պողոտայի հ.5/7 հասցեում և տարածագնահատման 4-րդ գոտում 2000.0քմ մակերեսով հողամասը փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, Ծ. Իսակովի պողոտային հարակից տարածքում տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող 2000.0 քմ մակերեսով հողամասի հետ։

Մյասնիկյան պողոտայի հ.5/7 հասցեում գտնվող հողամասը Լ.Պետրոսյանը ձեռք է բերել նախկինում, սակայն հաշվի առնելով, որ հարևանությամբ գտնվող հողամասերը նույնպես օտարվել են և տվյալ հատվածը քաղաքաշինական առումով կդառնա խիտ կառուցապատված տարածք, ինչպես նաև հողամասը չունի փաստացի մոտեցման ճանապարհ, ապա քաղաքաշինական դիրքի հստակեցման նպատակով առաջարկվել է կատարել հողամասերի փոխանակում։

Փոխանակվող հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1), 2) և 3) ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և ըստ տարածագնահատման սխեմայի գտնվում են 6-րդ գոտում:

Գույքի շուկայական գնահատման աշխատանքներն իրականացնող «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է անշարժ գույքի շուկայական արժեքի վերաբերյալ տեղեկատվություն, համաձայն որի Լ.Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Մյասնիկյան պողոտայի հ.5/7 հասցեում գտնվող 2000.0քմ մակերեսով հողամասի շուկայական արժեքը կազմում է 170.000.000 ՀՀ դրամ, իսկ Ծ.Իսակովի պողոտային հարող տարածքում գտնվող 2000.0քմ մակերեսով հողամասի շուկայական արժեքը կազմում է 168.000.000 ՀՀ դրամ, որից հետևում է, որ Լ.Պետրոսյանին պատկանող հողամասի շուկայական արժեքը 2.000.000 ՀՀ դրամ գումարով ավել է Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասի շուկայական արժեքից։

Լ.Պետրոսյանը տվել է իր համաձայնությունը առաջարկվող հողամասերի փոխանակման տարբերակին՝ առանց Երևան համայն քի կողմից գումարի տարբերության վճարման։

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի h.286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը փոխանակվում են համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա։

Ելնելով վերոգրյալից անհրաժեշտություն է առաջացել կայացնելու համապատասխան ավագանու որոշում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ առաջանում է Երևան քաղաքի ավագանու որոշման կատարումն ապահովելու մասին Երևանի քաղաքապետի որոշում ընդունելու անհրաժեշտություն:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ